ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ
ՊԱՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ոգի Գաղափար Ինքնություն

«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման ծրագրի ամփոփիչ հաշվետվություն

փետրվար, 2018 թվական

2017 թվականի մայիսի 20-ին ՀՀ Կրթության և գիտության նախարարության և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի միջև ստորագրված N Ա-9.6.1/40 պայմանագրի համաձայն 2017 թվականի հունիսի 1-ին մեկնարկեց ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն



Առաջին փուլ

Նախապատրաստական աշխատանքներ

- 1. Նախորդ տարիների ընթաքում վերապատրաստված, փոփոխված կամ փոփոխության ենթակա ուսուցիչների ցուցակագրում/տվյալների բազայի ստեղծում:
- 2. Սեմինար-պարապմունքներ վերապրաստող մասնագետների հետ, խմբերի ձևավորում և բաշխում մարզերով:
- 3. Ուսումնական պլանի վերանայում և համապատասխանեցում առկա պահանջներին:



	Գործողություն	Նկարագիր	Կատարող	Տևողություն
1	Ընդունելություն	Ներկա մասնակիցների գրանցում	Սաթենիկ	15ր
2	Ներածություն	Սեմինարի նպատակների և ընթացակարգի ներկայացում	Աննա	10ր
3	Բուն ծրագիր	Ծրագրում ներառված պարերի ներկայացում և քննարկում	Գինոսյան	15-20ր
4	Գործնական մաս	Պարերի գործնական փորձարկում	-	45-60ր
5	Խոսք	Արդեն իսկ վերապատրաստած մասնագետների կարծիք, փորձի փոխանակում	-	15ր
6	Ընդմիջում	-	-	15-20ր
7	Գրանցում	Վերապատրաստող կադրերի գրանցում ըստ մարզի	Սաթենիկ	10ր
8	Արդյունք	Սեմինարի և օրվա ընդհանուր արդյունքի ամփոփում	Գինոսյան	10ր

Վերապատրաստումներ

- Երևան — 19.06 - 30.06՝ 30 հոգի
- Արմավիր — 26.06 - 07.07՝ 28 հոգի
- Վայոց ձոր — 26.06 - 07.07՝ 36 հոգի
- Լեռնային Ղարաբաղ – 05.08. - 15.08՝ 20 հոգի

Երկրորդ փուլ

Նախապատրաստական աշխատանքներ

- 1. Ամփոփիչ հանդիպում վերապատրաստող թիմի հետ
- 2. Միասնական քննության պլանավորում և ձևաչափի ընտրություն
- 3. Թիմերի ձևավորում լրացուցիչ փուլերի և Լեռնային Ղարաբաղի ծրագրի համար
- 4. Առարկայի 6-7 դասարանների ծրագրի ամփոփում



Վերապատրաստում և քննություն

- Լեռնային Ղարաբաղ – 26.08. -30.08՝ 20 հոգի
- Երևան — 21.08 – 25.08՝ 34 հոգի
- Արմավիր — 21.08 – 25.08՝ 28 հոգի
- Վայոց ձոր — 22.08 – 26.08՝ 37 հոգի





- Երևան (6-7-րդ դասարանի ծրագրով) – 14.08 – 18.08՝ **60 հոգի**
- Երևան (5-րդ դասարանի ծրագրով) – 11.09 – 21.09՝ **14 ուսուցիչ**

Հաշվետու համերգ

- 2017 թվականի սեպտեմբերի 3-ին «Այբ» դպրոցում կազմակերպվեց հաշվետու համերգ, որին ներկա էին բոլոր ուսուցիչները, որոնք հաղթահարել էին առարկան դասավանդելու համար անհրաժեշտ շեմը: Միջոցառման բացման խոսքը ասեց «Այբ» դպրոցի տնօրեն պարոն Արամ Փախչանյանը, իսկ փակման ելույթը ՀՀ կրթության և գիտության փոխնախարար պարոն Դավիթ Սահակյանինն էր:

Համերգը ուղեկցվում էր կենդանի երաժշտությամբ, ինչը էլ ավելի ոգևորեց մասնակիցներին և ներկա հյուրերին:

Հաշվետու համերգին մասնակից ուսուցիչները ելույթ ունեցան, որի ընթացքում ցուցադրեցին երգ, պարերգ և պարեր:

Շնորհակալական խոսքեր հնչեցին որոշ մասնակիցներից:

Վկայականները հանձնվեցին 5-րդ դասարանի վերապատրաստում անցած մասնագետներին, որից հետո նաև լրացուցիչ 6-7 դասարանների վերապատրաստում անցած ուսուցիչներին:

Մասնակիցներին հանձնվեցին նաև նվեր շապիկներ «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի տարբերանշանով և Կոմիտասի հայտնի գրառումով (աննշմար փոփոխությամբ).
«Դաստիարակելու կոչված ենք սերունդ մը, որ ապագա ազգն է» :

Համեմատական պատկեր

2016 և 2017 թվականներին բյուջեից ստացված գումար՝ 8 351 000 ՀՀ դրամ





Մանրամասներ/Արդյունքներ

2017 թվական

Վերապատրաստված ուսուցիչներ՝ **168**

- Վերապատրաստող թիմ՝ **12**
- Սեմինարներ՝ **3 սեսիա**
- Դասավանդման փաթեթներ՝ **168 օրինակ**
- Շապիկներ՝ **168 + 16 հատ**
- **Ծառայություններ**
  - Հյուրանոց (Վայոց Ձոր)
  - Տրանսպորտ (Վայոց Ձոր, Արմավիր)
  - Օրապահիկ

2016 թվական

- Վերապատրաստված ուսուցիչներ՝ **113**
- Վերապատրաստող թիմ՝ **8**
- Սեմինարներ՝ **-**
- Դասավանդման փաթեթներ՝ **0 օրինակ**
- Շապիկներ՝ **0 հատ**
- Ծառայություններ **ՉԿ**
  - Կեցություն (Ֆիզմաթ դպրոց)
  - Տրանսպորտ **ՉԿ**
  - Օրապահիկ **ՉԿ**
  - Սնունդ (ֆիզմաթ ճաշարան)

Համաձայն ՀՀ ԿԳ Նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի 1081-Ա/2 Հրամանի «Ազգային երգ ու պար» առարկան ներառված է ՀՀ հետևյալ **222 դպրոցներում**

- Երևան 97
- Վայոց ձոր 46
- Արմավիր 35
- Կոտայք 7
- Շիրակ 6
- Սյունիք 6
- Արարատ 5
- Արագածոտն 5
- Գեղարքունիք 5
- Լոռի 5
- Տավուշ 5



Հ/Հ	Դպրոցը
1.	թիվ 1 հիմնական դպրոց
2.	թիվ 2 հիմնական դպրոց
3.	թիվ 6 հիմնական դպրոց
4.	թիվ 10 հիմնական դպրոց
5.	թիվ 11 հիմնական դպրոց
6.	թիվ 13 հիմնական դպրոց
7.	թիվ 14 հիմնական դպրոց
8.	թիվ 20 հիմնական դպրոց
9.	թիվ 21 հիմնական դպրոց
10.	թիվ 22 հիմնական դպրոց
	թիվ 31 հիմնական դպրոց



ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ	
218.	Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց
219.	Նոյեմբերյանի թիվ 2 միջնակարգ դպրոց
220.	Դիլիջանի թիվ 2 միջնակարգ դպրոց
221.	Դիլիջանի թիվ 4 միջնակարգ դպրոց
222.	Բերդի թիվ 3 միջնակարգ դպրոց

Մեր գործընկերները

Վերապատրաստող խմբի անդամները ապահովվել են արտագնա և Երևանում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծառայություններով:

Հաշվետու համերգի մասնակից մարզային ուսուցիչներին ապահով ենք տրանսպորտային միջոցներով, որոնք իրականցրել են երկկողմ տեղափոխություն:

Յուրաքանչյուր ծառայություն գնելուց առաջ կատարվել է մանրակրկիտ աշխատանք. ծրագրի համակորգողը, ծրագրի ղեկավարի համաձայնությամբ իրականացրել է հարցում, որի արդյունքում ընտրվել են առավել մատչելի և նպատակահարմար ծառայությունները:

2017 թվականի «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցիչների վերապատրաստման ծրագրի փուլերն ավարտվեցին սեպտեմբերի 21-ին:

Մինչև օրս տարվում են աշխատանքներ Կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության, դպրոցների ինչպես նաև ուսուցիչների հետ:

Այս ամենը միտված է հնարավոր բացերը լրացնելու, առարկան հիմնովին հաստատելու և ուսուցիչների աշխատանքները համակարգելու գործին:

Վերջնարդյունք

- Ընդհանուր արդյունքով սույն տարում վերապատրաստում է անցել **175 ուսուցիչ, որից 115-ը 5-րդ դասարանի ծրագրով, իսկ 60-ը՝ 6-7-րդ:**

Ծրագրի վերահսկման փուլ

Վերապատրաստումների և վկայականների հանձնման բոլոր փուլերի ավարտից հետո սկսվել են վերահսկման գործընթացներ:

- 2017թ. հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել հանդիպում վերապատրաստող թիմի որոշ մասնագետների և ծրագրի ղեկավարի հետ, որի ընթացքում որոշում է կայացվել ժամանակ ու տարատեսակ ռեսուրս խնայելու համար նախնական վերահսկումն իրականացնել դպրոցներից ստացված տեսնյութերի միջոցով:
- Պատրաստվել է ծանուցում, որն ուղարկվել է 2017թ. 5-րդ դասարանի ծրագրով վերապատսրատված սկսնակ ուսուցիչներին: Պահանջը եղել է ներկայացնել երգ, պար և պարերգ պարունակող տեսանյութեր իրենց անցկացրած դասերից:
- Տարվել են աշխատանքներ ԿԳ նախարարության հետ և ձեռք է բերվել դպրոցներ շրջայցերի թույլտվություն, որոնք նախատեսվում է իրականցնել հաջորդիվ:
- Կազմվում է վերոնշյալ շրջայցերի ծրագիր, իրականացման հերթականությունը՝ արդեն իսկ ստացված արդյունքների հիման վրա: